

Հավելված

Կ.Տ.

Ալափարսի համայնքի ավագանու

2016 թվականի դեկտեմբերի 12-ի

N 43-Ն որոշման

**ՀԱՍԱՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**

**ԱԼԱՓԱՐՍ ՀԱՄԱՅՆՔԻ  
2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ**

**ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ**

գ.Ալափարս 2016թ.

# ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ.....
2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ.....
3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ .....
4. ՀՁԾ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ.....
5. ՀՁԾ-Ի ՄՈՆԻԹՈՐԻՆԳ.....
6. ԵԶՐԱՓԱԿՈՒՄ.....

# 1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

ՀՀ Կոտայքի մարզի Ալափարս համայնքի 2017-2021 թթ. զարգացման ծրագիրը (այսուհետ՝ ՀՁԾ) մշակելիս հաշվի է առնվել, որ համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի, ՏԻՄ-երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են հինգ տարի ժամկետով, և 210-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը և ուժի մեջ մտնի 2017 թվականի հունվարի 1-ից: Համայնքի զարգացման ծրագիրը կազմելիս հաշվի է առնվել այդ պահանջները:

ՀՁԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասություններն ու լիազորությունները նրանց գործունեության բնագավառներում (ոլորտներում), ՀՁԾ-ի մշակման և կառավարման վերաբերյալ համապատասխան հոդվածների դրույթները, ինչպես նաև Կոտայքի մարզպետի կողմից ներկայացված համայնքի զարգացման ծրագրի մշակման մեթոդական ուղեցույցը:

Ներկայացվող ՀՁԾ-ն առաջիկա հինգ տարիների համար հանդիսանալու է Ալափարս համայնքի զարգացման հիմնական փաստաթղթերից մեկը: ՀՁԾ-ի բովանդակությունը պայմանավորված է համայնքի ռեսուրսային (մարդկային, գույքային, ֆինանսատնտեսական, տեխնիկական և այլ) հնարավորություններով, համայնքային ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ենթակառուցվածքների առկայությամբ: ՀՁԾ-ում հնարավորինս հաշվի են առնվել համայնքի հանրային ծառայությունների մատչելիության և հասանելիության, նոր ծառայությունների մատուցման և դրանցով պայմանավորված լրացուցիչ ծախսեր առաջանալու խնդիրները: ՀՁԾ-ն մշակելիս որպես կողմնորոշիչ են դիտարկվել համայնքի զարգացնելու անհրաժեշտությունը, համայնքի տարածքում տնտեսական գործունեության խրախուսման առկա հնարավորությունները, տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման (հատկապես՝ փոքր և միջին բիզնեսի և այլնի) հնարավորությունները, արդյունավետ կառավարման իրականացումը: Վերհանված հիմնախնդիրների հիման վրա, ելնելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներից, համայնքի ղեկավարը՝ համայնքապետարանի աշխատակազմի հետ միասին մշակել է 2017-2021թթ. ՀՁԾ-ն, որը քննարկվել և հաստատվել է համայնքի ավագանու կողմից և դրվել է գործողության մեջ:

Համայնքի 2017-2021թթ. ՀՁԾ-ում ներառված են Ալափարս համայնքի համայնքի տարածական զարգացումը սահմանող՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման կամ դրանց փոփոխման (լրացման) մասին դրույթներ, շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված նախատեսվող միջոցառումներ, համայնքում գործարար միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումներ, աղետների ռիսկերի կառավարման և

քաղաքացիական պաշտպանության հիմնական մոտեցումներ, համայնքի կոմունալ ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված միջոցառումներ: ՀՀ-ն ներառում է նաև Ալափարս համայնքի ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի բաղադրիչները: Այն Ալափարս համայնքի ներդաշնակ և համաչափ զարգացման, Ալափարսի համանքի բնակիչների բարեկեցության ապահովման համար առաջիկա հինգ տարիներին ընդունված ծրագիր է, որը հանդիսանալու է համայնքի ամենօրյա փաստաթուղթը:

Փաստաթուղթը մշակելիս, հատուկ ուշադրություն է դարձվել, որպեսզի այն հնարավորինս համահունչ լինի գործողության մեջ դրված ՀՀ ռազմավարական, մարզային և տարածաշրջանային զարգացման ծրագրերին՝ ակնկալելով ՀՀ պետական կառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների հետ լիակատար փոխըմբռնում ՀՀ-ում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն դրանց լուծման գործում:

## 2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### 2.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կոտայքի մարզի Ալափարս համայնքը գտնվում է Հրազդանի տարածաշրջանի հարավ արևմտյան մասում, մարզկենտրոն Հրազդանից 19 կմ հեռավորության վրա: Գյուղամերձ հատվածը սահմանակից է հյուսիսից, հյուսիս արևելքից և արևելքից՝ Բջնիի, հարավ արևելքից՝ Ֆանտանի, հարավից՝ Կարենիսի, հարավ արևմուտքից՝ Արզականի համայնքներին: Համայնքի գյուղացիական տնտեսությունները զբաղվում են հիմնականում անասնապահությամբ և դաշտավարությամբ:

Ալափարս գյուղը հիմնադրվել է 470 թվականին, վերաբնակեցվել է 1828 թվականին: Գյուղի հիմնական բնակիչները գաղթել են Պարսկաստանի Մակու և Խոյ գավառներից: Գյուղը հայտնի է սառնորակ աղբյուրով, որից բխող խմելու ջուրը մատակարարվում է համայնքին և Չարենցավան քաղաքին: Ալափարսի աղբյուրի ջուրը շշալցվում և վաճառվում է շուկայում հայտնի «Նոյ» ապրանքապիտակով: Գյուղից 7 կմ հեռավորության վրա անցնում է Երևան-Սևան մայրուղին, 7 կմ հեռավորության վրա անցնում է երկաթուղին: Գյուղը զբաղեցնում է 181 հեկտար տարածք: Համայնքն հայտնի է նաև պատմական և ճարտարապետական կոթողներով, որոնցից առավել հատնի են «Մարիամ Աստվածածին», «Սուրբ Վարդան» և «Ծիրանավոր» եկեղեցիները, «Թուխ Մանուկ» մատուռը: Բնակավայրը գտնվում է նախկին խոշոր արդյունաբերական քաղաք Չարենցավանից 7 կմ հեռավորության վրա, Աղվերան հանգստի գոտու մերձակայքում:

Կլիման բարեխառն է, երկարատև տաք ամառներով և ցուրտ ձմեռներով, տարեկան միջին ջերմաստիճանը տատանվում է +4, + 5 աստիճանի սահմաններում: Ամենացուրտ ամիսը հունվարն է, միջին ջերմաստիճանը՝ -10 աստիճան, ամենատաք ամիսը հուլիսն է, միջին ջերմաստիճանը՝ +21 աստիճան: Գարնանային վերջին ցրտահարությունները մեծ մասամբ տեղի են ունենում ապրիլի 2-րդ - մայիսի 1-ին տասնօրյակներում, իսկ աշնանային առաջին ցրտահարությունները սկսվում են սեպտեմբերի 3-րդ տասնօրյակից մինչև հոկտեմբերի 3-րդ տասնօրյակը: Սառնամանիք օրերի թիվը հասնում է 150-165 օրի, ձյունածածկ օրերի թիվը հասնում է 80-90 օրի: Մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը հասնում է 500-600 մմ-ի, որից նոյեմբեր-մարտ ամիսներին՝ 250 մմ, իսկ ապրիլ-հոկտեմբեր ամիսներին՝ 350 մմ: Մթնոլորտային տեղումների ընդհանուր քանակը բավարար է այստեղի բույսերի աճման ու զարգացման համար, սակայն ըստ ամիսների նրանց անհավասար բաշխվածության պատճառով բույսերը տուժում են երաշտից, որն ավելի սուր է ընթանում հատկապես հարավային չոր ու տաք քամիների ներթափանցման ժամանակ: Անջրդի և ջրովի պայմաններում հաջողությամբ մշակվում են հացահատիկային կուլտուրաներ:

**Աղյուսակ 1. Համայնքի մշտական բնակչության ու տնային տնտեսությունների ցուցանիշները (01.10.2016 թ. դրությամբ)**

Հ/Հ	Ցուցանիշները	Մարդ
1.	Բնակչության թվաքանակը, մարդ	2465
2.	Տնային տնտեսությունների թվաքանակը	583
2.1	այդ թվում՝ ժամանակավոր կացարաններում /վագոն, տնակ/ բնակվող	1
2.2	կիսակառույց տներում բնակվող	-
3.	Ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների քանակը	47

Համայնքի բնակչության 50.4% կազմում են տղամարդիկ և 49.6% կանայք: Համայնքի բնակչության տարիքային և սոցիալական կազմը ներկայացված է աղյուսակ 2-ում:

**Աղյուսակ 2. Համայնքի բնակչության տարիքային և սոցիալական կազմի ցուցանիշները (01.10.2016 թ. դրությամբ)**

Հ/Հ	Ցուցանիշները	Ընդամենը	Կանայք	Տղամարդիկ
1.	Համայնքի բնակչության թիվը, այդ թվում՝	2465	1223	1242
	մինչև 1 տարեկան	29	12	17
	1-2 տարեկան	31	10	21
	3-4 տարեկան	47	25	22
	5-6 տարեկան	55	28	27
	7-10 տարեկան	87	45	42
	11-14 տարեկան	73	37	36
	15-17 տարեկան	70	24	46
	18 և ավելի տարեկան	2073	1042	1031
2.	Կենսաթոշակառուներ (ներառյալ հաշմանդամներ) այդ թվում՝	281	167	114
	Տարիքային և աշխատանքային	275	166	109
3.	Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	6	3	3
4.	Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ	0	0	0
5.	Հաշմանդամ երեխաներ	6	1	5
6.	Խնամակալության հանձնված երեխաներ	0	0	0
7.	Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ	0	0	0

8.	Արցախյան պատերազմի մասնակիցներ	<b>4</b>	<b>0</b>	<b>4</b>
9.	Հաշմանդամներ	<b>17</b>	<b>9</b>	<b>8</b>
10.	Զբաղվածներ	<b>855</b>	<b>375</b>	<b>480</b>
11.	Գործազուրկներ	<b>465</b>	<b>280</b>	<b>185</b>
12.	Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը	<b>70</b>	-	-
13.	Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքների թիվը	<b>0</b>	-	-

Գործազուրկների մեծամասնությունը կազմում են կանայք: Տղամարդկանց աշխատունակ մի մասը զբաղված է արտագնա աշխատանքով:

## 2.2 ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Ալափարսի գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 14-ի N 42-Ն որոշմամբ հաստատված 2016 թվականի բյուջեն եկամտային մասով կազմել է **58 377.8** հազար դրամ, ծախսերի գծով՝ **58 377.8** հազար դրամ: Ալափարսի գյուղական համայնքի ավագանու 2016 թվականի հունվարի 14-ի N 4-Ն որոշմամբ 2016 թվականի բյուջեն (ճշտված բյուջե) ծախսերի գծով փոփոխվել է կազմել է **65 248.5** հազար դրամ: 2016 թվականի բյուջեի եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը կազմում է **49.2 %՝ 28741.2** հազար դրամ:

Աղբահանությունը կազմակերպվում է Ալափարսի համայնքապետարանի սպասարկող անձնակազմի ուժերով:

Համայնքի բնակիչները նախկինում հիմնականում աշխատել են նախկին արդյունաբերական խոշոր կենտրոն հանդիսացող Չարենցավան քաղաքի արդյունաբերական ձեռնարկություններում, որոնք ներկայումս չեն գործում և համայնքի աշխատունակ բնակիչները զբաղվում են հիմնականում գյուղատնտեսությամբ: Հիմնական գյուղատնտեսական արտադրանքներն են բուսաբուծության ճյուղում՝ հացահատիկը ազնվամորին, խնձորը, ընկույզը և բանջարեղենը, իսկ անասնապահության ճյուղում՝ միսը, կաթը, պանիրը և մեղրը: Գյուղատնտեսական արտադրանքի հիմնական սպառման շուկան Չարենցավան քաղաքն է:

Համայնքում զարգանում են առևտրի և սպասարկման փոքր և միջին կայուն ձևերը:

Համայնքի զարգացման համար անհրաժեշտ են կապիտալ ներդրումներ համայնքում գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման և փաթեթավորման ձեռնարկությունների ստեղծման համար: Նման ձեռնարկությունների ստեղծումով զգալիորեն կավելանան աշխատատեղերը ոչ միայն ձեռնարկություններում աշխատատեղերի ստեղծմամբ, այլ նաև՝ գյուղատնտեսության մեջ ներգրավվածների հաշվին:

Ալափարսի համայնքում կան երեք եկեղեցիներ՝ «Մարիամ Աստվածածին», «Սուրբ Վարդան» և «Ծիրանավոր», և մեկ մատուռ՝ «Թուխ Մանուկ»:

Համայնքում գործում են՝

✓ «Ալափարսի միջնակարգ դպրոց» պետակ ոչ առևտրային կազմակերպություն:

Դպրոցը ունի մասնակի վերանորոգման կարիք, ապահոցած է ջեռուցման համակարգով:

✓ «Ալափարս գյուղի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:

Իրականացնում է նախադպրոցական կրթություն, հիմնական վերանորոգված է, ապահովված է ջեռուցման համակարգով, անհրաժեշտ գույքով և սարքավորումներով: Մանկապարտեզն աշխատում է 8 ժամյա աշխատանքային ռեժիմով, տրվում է երեք անգամյա սնունդ՝ նախաճաշ, ճաշ, ետճաշիկ: Ալափարսի համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 11-ի N 35-Ն որոշման համաձայն մանկապարտեզում ծնողական վճարի չափը սահմանվել է յուրաքանչյուր երեխայի համար ամսական 4000 (չորս հազար) դրամ:

✓ «Ալափարսի մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:

Գործում են ժողովրդական պարի և սպորտային խմբակներ: Համայնքի միջոցներով ձեռք է բերվել անհրաժեշտ գույք ըմբշամարտի պարապմունքներ անցկացնելու համար: Խմբակները համայնքի բնակիչների համար գործում են անվճար: Մշակույթի տունը երբևէ չի վերանորոգվել և ներկայումս վերանորոգման կարիք ունի, իսկ շենքի տանիքը ունի անհապաղ վերանորոգման կարիք:

### **Աղյուսակ 3. Ալափարս համայնքի հանրակրթական դպրոցի և նախադպրոցական ուսումնական հաստատության վերաբերյալ ցուցանիշներ**

Հ/հ	Հաստատության անվանումը	Աշխատողների թիվը	Սովորողների թիվը
1.	«Ալափարսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	38	209
2.	«Ալափարս գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ	10	60

Ալափարս համայնքում գործում է առողջության առաջնային պահպանության մեկ կազմակերպություն՝ «Ալափարսի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ: Կենտրոնը առողջապահանակ ծառայություններ է մատուցում համայնքի բնակչությանը: Շենքը գտնվում է բարվոք վիճակում, ապահովված է ջեռուցման համակարգով, սակայն ունի արդիական բժշկական սարքերով համալրման կարիք:

### **2.3 ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐ**

Ներկայումս համայնքի վարչական տարածքում պետության կողմից, հարևան համայնքների հետ համատեղ, միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների, արտասահմանյան երկրների համայնքների հետ համագործակցության շրջանակներում, տեղացի և արտասահմանյան բարերարների կողմից, համայնքի վարչական տարածքում մասնավոր ընկերությունների կողմից ծրագրեր և միջոցառումներ չեն իրականացվում:

**2.4 ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ և ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ**

Համայնքի բյուջեի մուտքերը, կարելի է ասել, ձևավորվում են հիմնականում վարչական բյուջեի միջոցների հաշվին: Ֆոնդային բյուջեում մուտքեր են լինում համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի վաճառքից: Վարչական բյուջեի եկամուտները ձևավորվում են սահմանափակ թվով եկամտատեսակների՝ հարկերի, տեղական տուրքերի և գույքի վարձակալությունից եկամուտների հաշվին: Համայնքի բյուջեի կանխատեսվող եկամուտների մեծ մասը (2015թ.՝ 58.7%, 2016թ.՝ 52.2%, 2017թ.՝ 53.3%) ձևավորվում են պետական բյուջեից համայնքներին տրամադրվող ֆինանսական համահարթեցման դոտացիաների հաշվին (աղյուսակ 4):

Քանի որ համայնքի բյուջեի ֆոնդային մասում մուտքեր գրեթե չեն կանխատեսվում, ապա պլանավորվող հինգ տարիների կապիտալ ծախսերը մեծամասամբ կիրականացվեն համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումների և տարեսկզբի ազատ մնացորդի հաշվին:

**Աղյուսակ 4. Համայնքի 2015-2016թթ. բյուջեի մուտքերի ցուցանիշները և 2017-2021թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը**

Հ/հ	Մուտքերի անվանումը	հազար դրամ						
		2015թ. փաստ.	2016թ. փաստացի 01.10.2016	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.
	<b>ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ (I+II+III)*</b>	53242.4	39643.7	55547.6	56700.0	59700.0	61850.0	63800.0
I.	<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (1+2+3)*</b>	53242.4	35258.3	55547.6	56700.0	59700.0	61850.0	63800.0
1	<b>ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ</b>	19893.2	11108.9	22873.0	24000.0	26000.0	27500.0	28500.0
1.1	<b>Գույքային հարկեր անշարժ գույքից</b>	12502.8	6432.9	17250.0	18000.0	19500.0	20500.0	21000.0
	Գույքահարկ շենքերի և շինությունների համար	1191.7	973.5	4000.0	4000.0	5000.0	6000.0	6000.0
	Հողի հարկ	11311.1	5459.4	13260.0	14000.0	14500.0	14500.0	15000.0
1.2	<b>Գույքային հարկեր այլ գույքից</b>	6646.4	4082.0	5623.0	6000.0	6500.0	7000.0	7500.0
	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	6646.4	4082.0	5623.0	6000.0	6500.0	7000.0	4500.0
1.3	<b>Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ</b>	744.0	594.0	728.0	800.0	900.0	1000.0	1500.0
	Տեղական տուրքեր	744.0	594.0	728.0	800.0	900.0	1000.0	1500.0
1.4	<b>Ապրանքների մատակարարումից և</b>							

	<b>ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ</b>							
	Պետական տուրքեր							
<b>1.5</b>	<b>Այլ հարկային եկամուտներ</b>							
	Այլ հարկերից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումներ							
	Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում այդ հարկերի գումարների նկատմամբ							
<b>2</b>	<b>ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ</b>	<b>31229.9</b>	<b>23289.6</b>	<b>29636.6</b>	<b>29500.0</b>	<b>30000.0</b>	<b>30000.0</b>	<b>30000.0</b>
<b>2.1</b>	<b>Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ</b>							
<b>2.2</b>	<b>Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ</b>							
<b>2.3</b>	<b>Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ</b>	<b>31229.9</b>	<b>23289.6</b>	<b>29636.6</b>	<b>29500.0</b>	<b>30000.0</b>	<b>30000.0</b>	<b>30000.0</b>
ա)	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	30016.2	22221.5	29636.5	29500.0	30000.0	30000.0	30000.0
բ)	Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ	1213.7	1062.1					
գ)	Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)							
դ)	ՀՀ այլ համայնքների բյուջեներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ							
<b>2.4</b>	<b>Կապիտալ ներքին պաշտոնական</b>							

	<b>դրամաշնորհներ</b>							
ա)	Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)							
բ)	ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ							
<b>3</b>	<b>ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ*</b>	<b>2119.3</b>	<b>859.9</b>	<b>2200.0</b>	<b>2200.0</b>	<b>2500.0</b>	<b>2800.0</b>	<b>3400.0</b>
<b>3.1</b>	<b>Տոկոսներ</b>							
<b>3.2</b>	<b>Շահաբաժիններ</b>							
<b>3.3</b>	<b>Գույքի վարձակալությունից եկամուտներ</b>	<b>2119.3</b>	<b>823.0</b>	<b>2200.0</b>	<b>2200.0</b>	<b>2500.0</b>	<b>2800.0</b>	<b>3100.0</b>
	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	1317.0	663.0	1600.0	1600.0	1900.0	2200.0	2500.0
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	<b>440.0</b>		<b>440.0</b>	440.0	440.0	440.0	440.0
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ							
	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր	<b>160.0</b>	<b>160.0</b>	<b>160.0</b>	<b>160.0</b>	<b>160.0</b>	<b>160.0</b>	<b>160.0</b>
<b>3.4</b>	<b>Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, այդ թվում</b>							
	Պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ							

<b>3.5</b>	<b>Վարչական գանձումներ</b>	<b>111.8</b>	<b>26.9</b>	<b>100.0</b>	<b>150.0</b>	<b>200.0</b>	<b>300.0</b>	<b>400.0</b>
	Տեղական վճարներ	111.8	26.9	100.0	150.0	200.0	300.0	400.0
	Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ							
	Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) վճարներ							
<b>3.6</b>	<b>Մուտքեր տույժերից, տուգանքներից</b>	<b>60.0</b>						
	Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ-երի կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ	60.0						
	Մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող տույժերից							
<b>3.7</b>	<b>Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ</b>							
<b>3.8</b>	<b>Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ</b>							
<b>3.9</b>	<b>Այլ եկամուտներ*</b>	<b>30.5</b>	<b>10.0</b>	<b>10.0</b>	<b>60.0</b>	<b>100.0</b>	<b>250.0</b>	<b>300.0</b>
	Համայնքի գույքին պատճառած վնասների փոխհատուցումից մուտքեր							
	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր							
	Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ	30.5	10.0	10.0	60.0	100.0	250.0	300.0
<b>II.</b>	<b>ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՎՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ</b>	<b>-6519.7</b>	<b>4940.0</b>					

	<b>ՄՈՒՏՔԵՐ (1+2+3+4)</b>							
1	<b>Հիմնական միջոցների իրացումից մուտքեր</b>	-6519.7	4940.0					
	Անշարժ գույքի իրացումից մուտքեր							
	Շարժական գույքի իրացումից մուտքեր							
	Այլ հիմնական միջոցների իրացումից մուտքեր							
2	<b>Պաշարների իրացումից մուտքեր</b>							
3	<b>Բարձրարժեք ակտիվների իրացումից մուտքեր</b>							
4	<b>Չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր</b>							
	Հողի իրացումից մուտքեր	6519.7						
	Ոչ նյութական չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր							
III.	<b>ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՄ ՊԱԿԱՍՈՒՐԴԻ (ԴԵՖԻՑԻՏԻ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ (Ա+Բ)</b>	26148.9	4546.4					
Ա.	<b>ՆԵՐՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ (1+2)</b>							
1	<b>ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ</b>							
1.1	<b>Արժեթղթեր</b>							
	-թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր							
	-հիմնական գումարի մարում							
1.2	<b>Վարկեր</b>							
	-վարկերի ստացում							
	-ստացված վարկերի հիմնական գումարի մարում							
1.3	<b>Փոխատվություններ</b>							
	-բյուջետային փոխատվությունների ստացում							
	-ստացված փոխատվությունների գումարի մարում							
2	<b>ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ</b>							
2.1	<b>Բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն</b>							

	-համայնքային սեփականության բաժնետոմսերի և կապիտալում համայնքի մասնակցության իրացումից մուտքեր							
	-իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից առաջացած միջոցներից համայնքի բյուջե մասհանումից մուտքեր							
	-բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն ձեռքբերում							
<b>2.2</b>	<b>Փոխատվություններ</b>							
	-նախկինում տրամադրված փոխատվությունների դիմաց ստացվող մարումներից մուտքեր							
	-փոխատվությունների տրամադրում							
<b>2.3</b>	<b>Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը</b>	<b>16148.9</b>	<b>8464.0</b>					
<b>2.4</b>	<b>Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցների տրամադրում վարչական մաս</b>	15209.7	5037.8					
<b>2.5</b>	<b>Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցներից վարչական մաս տրամադրված միջոցների վերադարձ ֆոնդային մաս</b>	939.2	3426.2					
<b>2.6</b>	<b>Համայնքի բյուջեի հաշվում միջոցների մնացորդները հաշվետու ժամանակահատվածում</b>	<b>8464.0</b>						
	<b>որից՝ ծախսերի ֆինանսավորմանը չուղղված համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի</b>							





## **2.5. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ ԵՎ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Համայնքի զարգացման առկա դժվարությունները ըստ ուղղությունների ներկայացված են ստորև.

1. Ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպումը՝ երիտասարդության ներգրավմամբ,
2. Գյուղատնտեսական մթերքների իրացումը,
3. Զրոյի վարելահողերի ոռոգման բարելավումը,
4. Համայնքի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, ինչպես նաև համայնքային գերեզմանատան պահպանումը և գործունեության ապահովումը,
5. Համայնքի սեփականություն համարվող վարչական շենքերի և այլ շինությունների պահպանումը, շահագործումը, կազմակերպում է դրանց նորոգումը,
6. Բարեգործության խթանումը՝ համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով:

Վերը նշված հիմնահարցերի լուծման համար առկա դժվարությունները կապված են հիմնականում համայնքի եկամուտներից: Համայնքը չունի անհրաժեշտ եկամուտներ՝ իր առջև դրված հիմնահարցերը միանգամից լուծելու համար:

## **2.6 ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՍԵԼԻՔՆԵՐԻ (ՈՍԹՀՍ) ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

### **ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ**

Համայնքի ուժեղ կողմերն են՝

- ✓ Զարգացման համար համայնքն ունի բավարար մասնագիտական ներուժ,
- ✓ Հաշվի առնելով համայնքի աշխարհագրական դիրքը՝ այն կարելի է դարձնել գյուղմթերքների արտադրության կենտրոն,
- ✓ Համայնքի մայրաքաղաքին մոտ գտնվելը,
- ✓ Երևան և Զարեցավան քաղաքներին կապող ճանապարհի լավ վիճակը,
- ✓ Համայնքում գտնվող եկեղեցիները,

### **ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ**

Համայնքի թույլ կողմերն են՝

- ✓ Ոռոգման ջրի մատակարարման վատ վիճակը,
- ✓ Գործազրկության առկայությունը և արտագնա աշխատանքի մեկնողների մեծ քանակը,
- ✓ Աշխատատեղերի պակասը,
- ✓ Գյուղ մթերքների իրացման դժվարություններ,
- ✓ Բնակարանի կարիք ունեցող երտասարդ ընտանիքների մեծ թիվը:

### **ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Համայնքի զարգացման հնարավորություններն են՝

- ✓ Մեծ քանակի և որակի աշխատուժի առկայությունը,
- ✓ Գյուղմթերքների վերամշակման փոքր ձեռնարկությունների ստեղծում:

### **ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՎՏԱՆԳՆԵՐԸ**

Համայնքին սպառնացող հիմնական վտանգներն են՝

- ✓ Բնական տարերային աղետների հնարավոր պատճառած վնասները (երկրաշարժ, հեղեղումներ, կարկտահարություն, ցրտահարություններ)
- ✓ Գործազրկության մակարդակի աճը,
- ✓ Արտագաղթը, հատկապես երիտասարդների շրջանում:

### 3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

#### 3.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆ

Ալափարսի համայնքի տարածքային և տնտեսական զարգացման գործում կարևոր է հաշվի առնել համայնքի բնակչության հեռանկարային աճը, որը ելնում է համայնքի հեռանկարային տարածքային զարգացման հնարավորություններից:

Համայնքի զարգացման ռազմավարությունն է՝ բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները և, հաշվի առնելով համայնքում ջրովի և անջրդի վարելահողերի առկայությունը, համայնքը դարձնել գյուղատնտեսական մթերքների արտադրության կենտրոն, մաքուր, բարեկարգ, կանաչապատ և գրավիչ բնակավայր:

Զարգացման հիմնական ուղղությունների իրականացման գործընթացում խիստ կարևորվում է տեղական իշխանությունների, համայնքի բնակչության, քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների և գործարարների համատեղ գործունեությունը, ինչպես նաև համագործակցությունը պետական կառավարման մարմինների և դոնոր կազմակերպությունների հետ:

Համայնքի կայուն զարգացման ցուցանիշներն են՝

- ✓ Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով),
- ✓ Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ, արտահայտված տոկոսով,
- ✓ Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը (չպայմանավորված բնական աճով) նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով:

Ցուցանիշների արժեքները հինգ տարիների համար ներկայացված է աղյուսակ 5-ում:

#### **Աղյուսակ 6. Համայնքի կայուն զարգացման ցուցանիշների կանխատեսվող արժեքները հինգ տարիների համար (2017-2021թթ.)**

Հ/Հ	Ցուցանիշները	2017	2018	2019	2020	2021
1.	Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով)	22.4%	22%	21%	20%	18%
2.	Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ, արտահայտված տոկոսով	4.3%	6.5%	12.2%	16.2%	19.8%
3.	Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը (չպայմանավորված բնական աճով) նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով	1%	1.1%	1.2%	1.3%	1.5%

### 3.2 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Առաջիկա 5 տարիներին համայնքի հիմնական նպատակներն են՝

- ✓ Համայնքի մշակույթի տան տանիքի վերանորոգումը.
- ✓ Համայնքի փողոցների բարեկարգումը,
- ✓ Ոռոգման ցանցի ընդլայնում,
- ✓ Գիշերային լուսավորության ցանցի ընդլայնում,
- ✓ Համայնքում գյուղատնտեսական ապրանքների վերամշակման արտադրությունների ստեղծում,
- ✓ Համայնքի գլխավոր սելավատար առվի մաքրում:

**Աղյուսակ 7. Համայնքի կայուն զարգացման ցուցանիշների և հիմնական նպատակների կանխատեսվող արժեքներ (2017-2021թ.թ.)**

Տրամաբանական մոդելի բաղադրիչ	2017	2018	2019	2020	2021
<b>ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ</b>					
1.Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով)	22.4%	22%	21%	20%	18%
2.Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ,արտահայտված տոկոսով	4.3%	6.5%	12.2%	16.2%	19.8%
3.Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով, չհաշված համայնքի բնակչության փոփոխությունը բնական աճի պատճառով	1%	1.1%	1.2%	1.3%	1.5%
<b>ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ</b>					

1. Համայնքի մշակույթի տան տանիքի վերանորոգում					
2. Համայնքի փողոցների բարեկարգումը					
3.Ոռոգման ցանցի ընդլայնում					
4.Գիշերային լուսավորության ցանցի ընդլայնում					
5.Համայնքում գյուղատնտեսական ապրանքների վերամշակման արտադրությունների ստեղծում					
6.Համայնքի գլխավոր սելավատար առվի մաքրում					

Նշված խնդիրների լուծման նպատակով նախատեսվող ծրագրերը ներկայացված են ծրագրի անձնագրերում:

**Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր Ո Ւ**

«Համայնքի մշակույթի տան տանիքի վերանորոգում»  
(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Ներգրավել ներդրողների համայնքի մշակույթի տան տանիքը վերանորոգելու համար						
Ծրագրի անմիջական նպատակ՝ <b>ակտիվ մշակութային և մարզական կյանքի բարելավում, համայնքային սեփականության պահպանում</b>	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի միջանկյալ արդյունքներ <b>Շուրջ 15 աշխատատեղի ստեղծում</b>	<b>1. Լրացուցիչ աշխատատեղերի ստեղծում</b>						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	0	0	0	0	0	15	
	<b>2. Երեխաների թվի աճ</b>						
Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ					
	2016	2017	2018	2019	2020	2021	
40	40	40	40	40	60		
Ծրագրի հիմնական գործողությունները	<ol style="list-style-type: none"> <li>Ծրագիրը իրականացնող դոնոր կազմակերպ. փնտրում</li> <li>Համայնքի ներդրում</li> <li>Պայմանագրի կնքում</li> <li>Աշխատանքների կատարում</li> </ol>						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 0.0 Կապիտալ ծախսեր՝ 70.000 հազ.դրամ Ընդհանուր բյուջեն՝ 70.000 հազ.դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ							
Ծրագրի հիմնական ռիսկերը	Տարերային աղետներ						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	01.06.2021թ.- 30.09.2021թ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքի մշակույթի տան շենքը երբևէ չի վերանորոգվել: Այստեղ գործում են ժողովրդական պարերի և սպորտային խմբակներ, անցկացվում են զանազան մշակութային միջոցառումներ: Անհրաժեշտ է վերանորոգել հատկապես շենքի տանիքը, քանի որ առաջացած կաթոցների հետևանքով քայքայվում է ամբողջ շենքը:						

## Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր Ո Ղ

«Համայնքի փողոցների բարեկարգում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Միջոցներ հայթհայթել ճանապարհների կառուցման աշխատանքների իրականացման համար:						
<b>Ծրագրի անմիջական նպատակ՝ Բնակչության ազատ տեղաշարժի բարելավում, գյուղատնտեսական մթերքների իրացման նպաստում</b>	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ(կմ)				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	2.0	4.0	6.0	8.0	10.0
<b>Ծրագրի միջանկյալ արդյունքներ Ունենալ անցանելի ճանապարհներ</b>	<b>1. Համայնքային ճանապարհների վերանորոգում (%)</b>						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	20	40	60	80	100
	<b>2.</b>						
Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ					
	2016	2017	2018	2019	2020	2021	
Ծրագրի հիմնական գործողությունները	<ol style="list-style-type: none"> <li>1. Ծրագիրը իրականացնող դոնոր կազմակերպ. փնտրում</li> <li>2. Համայնքի ներդրում</li> <li>3. Պայմանագրի կնքում</li> <li>4. Աշխատանքների կատարում</li> </ol>						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 0.0 դրամ Կապիտալ ծախսեր՝ 150.000 հազ.դրամ Ընդհանուր բյուջեն՝ 150.000 հազ.դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ							
Ծրագրի հիմնական ռիսկերը	Տարերային աղետները						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքի փողոցները հիմնականում գրունտային են, անհրաժեշտություն է առաջանում պարբերաբար կատարել փոսալցումներ, իսկ փողոցներից 2 կմ ասվալտապատել:						

**Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր Ո Յ**

«Ոռոգման ցանցի ընդլայնում»  
(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Միջոցներ հայթայթել ոռոգման փակ ջրագծի կառուցման աշխատանքների իրականացման համար						
Ծրագրի անմիջական նպատակ՝ <b>Համայնքում գյուղատնտեսության կարևորագույն խնդիրներից մեկի լուծում և գյուղատնտեսության զարգացում</b>	<b>Ոռոգվող հողատարածությունները</b>						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ (հա)				
		2016	2017	2018	2019	2020	2021
0.0	10.0	12.0	15.0	20.0	25.0		
Ծրագրի միջանկյալ արդյունքներ <b>Գյուղատնտեսության զարգացում և ոռոգման ջրի կորուստների կրճատում</b>	<b>1. Գյուղատնտեսության զարգացում</b>						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ (%)				
		2016	2017	2018	2019	2020	2021
	30	30	35	45	50	65	
	<b>2. Ոռոգման ջրի կորուստներ</b>						
Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ (%)					
	2016	2017	2018	2019	2020	2021	
65	65	50	40	30	15		
Ծրագրի հիմնական գործողությունները	<ol style="list-style-type: none"> <li>1. Ծրագիրը իրականացնող դոնոր կազմակերպ. փնտրում</li> <li>2. Համայնքի ներդրում</li> <li>3. Պայմանագրի կնքում</li> <li>4. Աշխատանքների կատարում</li> </ol>						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 0.0 դրամ Կապիտալ ծախսեր՝ 70.000 հազ.դրամ Ընդհանուր բյուջեն՝ 70.000 հազ.դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ							
Ծրագրի հիմնական ռիսկերը	Տարերային աղետները						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքի երբեմնի խնձորենու այգիները ոռոգման ջրի բացակայության հետևանքով վերածվել են ջրովի վարելահողերի, որտեղ հիմնականում մշակվում է հացահատիկ: Վերջին տարիներին համայնքում կառուցված ոռոգման փակ խողովակաշարից նախատեսվում է ոռոգման ջուրը հասցնել այդ վարելահողերին, որը հնարավորություն կտա հիմնել նոր այգիներ կամ ազնվամորու տնկարքեր:						

**Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր Ո 4**

«Գիշերային լուսավորության ցանցի ընդլայնում»  
(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Միջոցներ հայթայթել փողոցային լուսավորության աշխատանքների իրականացման համար, ինչպես նաև համայնքային միջոցների գույքի ավելացում:						
Ծրագրի անմիջական նպատակ՝ <b>Ունենալ արտաքին լուսավորությունով ապահոված, անվտանգ և մաքուր փողոցներ</b>	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի միջանկյալ արդյունքներ <b>Ապահովել բնակչությանը անվտանգ և լուսավոր փողոցներով, որից կօգտվի համայնքի բնակչությանը 40%-ը:</b>	<b>1. Լուսավորությունից օգտվող բնակչության թիվը</b>						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ(մարդ)				
		2016	2017	2018	2019	2020	2021
	0	150	200	250	500	550	
	<b>2.</b>						
Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ					
	2016	2017	2018	2019	2020	2021	
Ծրագրի հիմնական գործողությունները	<ol style="list-style-type: none"> <li>1. Ծրագիրը իրականացնող դոնոր կազմակերպ. փնտրում</li> <li>2. Մրցույթի հայտարարություն</li> <li>3. Պայմանագրի կնքում</li> <li>4. Աշխատանքների կատարում</li> </ol>						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 0.0 դրամ Կապիտալ ծախսեր՝ 30.000 հազ. դրամ Ընդհանուր բյուջեն՝ 30.000 հազ.դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ							
Ծրագրի հիմնական ռիսկերը	Տարերային աղետները						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքի հիմնական բնակելի թաղամասերում փողոցային լուսավորության աշխատանքների իրականացման ավարտ:						

**Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր Ն 5**

«Գյուղատնտեսական ապրանքների վերամշակման արտադրությունների ստեղծում»  
(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Ներգրավել ներդրողների համայնքում գյուղատնտեսական մթերքների վերամշակման արտադրության իրականացման համար						
Ծրագրի անմիջական նպատակ՝ <b>Գյուղատնտեսության զարգացում, մթերքների վերամշակման հնարավորությունների ստեղծում</b>	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի միջանկյալ արդյունքներ <b>Հողերի արդյունավետ օգտագործում, անասնապահության զարգացում</b>	<b>1. Անասունների գլխաքանակ</b>						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ(գլուխ/ պայմանական միավոր)				
		2016	2017	2018	2019	2020	2021
		788	800	900	1000	1050	1100
	<b>2. Հողերի արդյունավետ օգտագործում</b>						
Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ(հողատերեր)					
	2016	2017	2018	2019	2020	2021	
	0	100	120	150	200	250	
Ծրագրի հիմնական գործողությունները	<ol style="list-style-type: none"> <li>1. Ծրագիրը իրականացնող դոնոր կազմակերպ. ներգրավում</li> <li>2. Համայնքի կողմից ներդրում</li> <li>3. Պայմանագրի կնքում</li> <li>4. Աշխատանքների կատարում</li> </ol>						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 0.0 դրամ Կապիտալ ծախսեր՝ 150.000 հազ.դրամ Ընդհանուր բյուջեն՝ 150.000 հազ.դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ							
Ծրագրի հիմնական ռիսկերը	Տարերային աղետները						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2018թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ստեղծել գյուղատնտեսական մթերքների վերամշակման արտադրամասեր, իսկ համայնքի կողմից ներդրումը կլինի ճանապարհային և կոմունիկացիոն ենթակառուցվածքների ապահովմամբ:						

**Ծ Ր Ա Պ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Պ Ի Ր Ո Յ**

«Համայնքի գլխավոր սեփականատար առվի մաքրում»  
(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի բյուջեից հատկացնել միջոցներ՝ գլխավոր սեփականատար առվի մաքրման համար						
Ծրագրի անմիջական նպատակ՝ <b>Աղետի ռիսկերի մեղմում</b>	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
Ծրագրի հիմնական գործողությունները	<ol style="list-style-type: none"> <li>1. Համայնքի կողմից ֆինանսների հատկացում</li> <li>2. Պայմանագրի կնքում</li> <li>3. Աշխատանքների կատարում</li> </ol>						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 0.0 դրամ Կապիտալ ծախսեր՝ 1.000 հազ.դրամ Ընդհանուր բյուջեն՝ 1.000 հազ.դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ							
Ծրագրի հիմնական ռիսկերը	Տարերային աղետները						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	01.03.2017թ.- 30.06.2017թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքի գլխավոր սեփականատար առուն պարբերաբար մաքրվում է համայնքի միջոցներով, սակայն անհրաժեշտություն է առաջացել կատարել ավելի խորը մաքրում, որը կբացառի առվին հարակից տարածքների ողողումը:						

#### 4. ՀՁԾ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Համայնքի յուրաքանչյուր տարվա բյուջեի նախագծի կազմման ծրագրային հիմքը ՀՁԾ-ում համապատասխան տարվա համար նախատեսված ոլորտային և բնակավայրային ծրագրերն են, որոնց իրականացման համար հաշվարկվել են ֆինանսավորման համապատասխան աղբյուրներ և ծախսեր: Գործնականում, ՀՁԾ-ի իրականացումը հանգում է հիմնականում (չհաշված ֆինանսավորման այլ աղբյուրների հաշվին նախատեսված ծրագրերը) համայնքի գալիք հինգ տարիների բյուջեների կատարմանը:

Ալափարսի համայնքի ՀՁԾ-ի ֆինանսավորումն ամփոփված է Աղյուսակ 7-ում:

**Աղյուսակ 8. ՀՁԾ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ  
(Ալափարս համայնք)  
(2017-2021 թթ.)**

Պարտադիր խնդիր	Բյուջետ ա- վորված միջոցնե ր (մլն.դրա մ)	Ծրագրի կատարումն ըստ տարիների					Ֆինանսավորման աղբյուրներ						Ծախսերի դասեր		Ֆինանսավորման կարգավիճակ		
		2017	2018	2019	2020	2021	Համայնքի սեփական եկամուտներ	Ներքին պաշտոնական դրամաշնորհներ	Արտաքին պաշտոնական դրամաշնորհներ	Բարեգործություն/նվիրատվություն	Պետություն-համայնք-մասնավոր հատված համագործակցու-թյուն	Այլ աղբյուրներ	Ընթացիկ ծախսեր	Կապիտալ ծախսեր	Ֆինանսավորումն առկա է	Ֆինանսավորման շուրջ ընթացում են բանակցություններ	Ներկայացվել է ֆինանսավորման հայտ
1. Համայնքի մշակույթի տան տանիքի վերանորոգում	70.0					70.0	7.0			63.0			70.0				63.0
2. Համայնքի փողոցների բարեկարգում	150.0	30.0	30.0	30.0	30.0	30.0	15.0			135.0			135.0				135.0
3. Ոռոգման ցանցի ընդլայնում	70.0	10.0	15.0	15.0	15.0	15.0	15.0			63.0			70.0				63.0

4.Գիշերային լուսավորության ցանցի ընդլայնում	30.0	6.0	6.0	6.0	6.0	6.0	3.0			27.0				30.0				27.0
5.Համայնքում գյուղատնտեսական ապրանքների վերամշակման արտադրությունների ստեղծում	200.0	100.0	100.0									200.0						200.0
6.Համայնքի գլխավոր սելավատար առվի մաքրում	1.0	1.0					1.0							1.0	1.0			

## 5. ՀՁԾ-Ի ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

ՀՁԾ-ի ներքին մոնիթորինգն իրականացվելու է ՀՁԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ-ի կողմից յուրաքանչյուր տարին մեկ անգամ:

ՀՁԾ-ի մոնիթորինգն իրականացվելու է ըստ ոլորտային ծրագրերի ու միջոցառումների աշխատանքների կատարման ցուցանիշների:

**Աղյուսակ 9-ում** ներկայացված է ՀՁԾ-ում ներառված ծրագրերի միջոցառումների մոնիթորինգի և գնահատման վերաբերյալ տեղեկատվության ներկայացման ձևանմուշը:

## Աղյուսակ 9. Մ Ո Ն Ի Թ Ո Ր Ի Ն Գ Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

(Ալափարս համայնքի)  
(2017-2021 թվականներ)

Տրամաբանական մոդելի բաղադրիչ	Ցուցանիշի փաստացի արժեք (2016)	Ցուցանիշի թիրախային արժեք (2017)	Ցուցանիշի փաստացի արժեք (2017)	Ցուցանիշի կատարողական (2017)	Ցուցանիշի թիրախային արժեք (2018)	Ցուցանիշի փաստացի արժեք (2018)	Ցուցանիշի կատարողական (2018)	Ցուցանիշի թիրախային արժեք (2019)	Ցուցանիշի փաստացի արժեք (2019)	Ցուցանիշի կատարողական (2019)	Ցուցանիշի թիրախային արժեք (2020)	Ցուցանիշի փաստացի արժեք (2020)	Ցուցանիշի կատարողական (2020)	Ցուցանիշի թիրախային արժեք (2021)	Ցուցանիշի փաստացի արժեք (2021)	Ցուցանիշի կատարողական (2021)	Տվյալների հավաքագրման պարբերականությունը		Ցուցանիշի ստացման աղբյուր	Ցուցանիշի ստացման մեթոդ
	Կիսամյակային	Տարեկան																		
<b>Համայնքի կայուն զարգացում</b>																				
Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (%)																		X	Կոտայքի մարզպետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն/հարցազրույց
Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ, (%)																		X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն
Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով, չհաշված համայնքի բնակչության փոփոխությունը բնական աճի պատճառով																		X	«Ոստիկանություն»	Հարցում









Համայնքի գլխավոր հատակագծի առկայություն																		X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն	
Համայնքում գլխավոր հատակագծին համապատասխան տրված շինարարական թույլտվությունների թվի հարաբերությունը տրված շինարարական թույլտվությունների ընդհանուր թվին, արտահայտված տոկոսով																			X	Համայնքապետարան	Փաստացի ուսումնասիրություն
Համայնքում քաղաքաշինական կանոնադրության առկայություն																			X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն
Կառուցապատման թույլատրության մեջ նշված ժամկետների պահպանմամբ իրականացված շինարարությունների թվի հարաբերությունը համայնքում իրականացված շինարարությունների ընդհանուր թվին, արտահայտված տոկոսով																			X	Համայնքապետարան	Փաստացի ուսումնասիրություն
Համատիրությունների կողմից սպասարկվող բնակելի մակերեսի հարաբերությունը համայնքի կողմից սպասարկվող բնակելի մակերեսին, արտահայտված տոկոսով																			X	Համայնքապետարան/ համատիրություններ	Փաստացի ուսումնասիրություն

Համայնքում հավաքված և աղբավայրերում տեղադրված աղբի հարաբերությունը համայնքում առաջացող ամբողջ աղբին, արտահայտված տոկոսով																		X	Համայնքապետարան/մասնավոր օպերատորներ	Խորքային հարցազրույց	
Համայնքի սանիտարական մաքրման ենթարկվող տարածքի մակերեսի հարաբերությունը համայնքի ընդհանուր տարածքի մակերեսին, արտահայտված տոկոսով																			X	Համայնքապետարան/մասնավոր օպերատորներ	Հարցում/խորքային հարցազրույց
Համայնքի բնակիչների բավարարվածությունը աղբահանությունից և սանիտարական մաքրումից																			X	Համայնքի բնակիչներ	Հարցում կամ խմբային հարցազրույց/ֆոկուս խումբ
Համայնքի բնակիչների բավարարվածությունը ջրամատակարարումից և ջրահեռացումից																			X	Համայնքի բնակիչներ	Հարցում կամ խմբային հարցազրույց/ֆոկուս խումբ
Համայնքի բնակիչների բավարարվածությունը ոռոգման ջրի մատակարարումից																					Հարցում կամ խմբային հարցազրույց/ֆոկուս խումբ
Համայնքի բնակիչների բավարարվածությունն աղբահանությունից և սանիտարական մաքրումից																			X	Համայնքի բնակիչներ	Հարցում
Համայնքի կանաչ տարածքների տարեկան աճ, արտահայտված տոկոսով																			X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն





11. Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացում																				
11.1. Համայնքի գլխավոր սեփականատար առվի մաքրում																		X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն
12. Գյուղական բնակավայր ընդգրկող համայնքներում գյուղատնտեսության և զարգացման խթանում																				
12.1. Ոռոգման ցանցի ընդլայնում																		X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն
12.2. Համայնքում գյուղատնտեսական ապրանքների վերամշակման արտադրությունների ստեղծում																		X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն
Համայնքի՝ գյուղատնտեսությամբ զբաղվող բնակիչների եկամտի տարեկան աճ																		X	Գյուղատնտեսությամբ զբաղվող բնակիչներ	Հարցում կամ խմբային հարցազրույց/ֆոկուս խումբ
Բերքատվության տարեկան աճ																		X	Համայնքապետարան	Հարցում









## 6. ԵԶՐԱՓՈՒՄ

ՀԶԾ-ն հանդիսանալու է համայնքի գալիք հինգ տարիների գործունեության ուղեցույցը: 2017-2021թթ. ընթացքում ՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերի իրականացմանն են ուղղված լինելու համայնքի ՏԻՄ-երի ջանքերն ու աշխատանքը՝ մոբիլիզացնելով համայնքի ֆինանսական, մարդկային և նյութական ռեսուրսների ողջ պոտենցիալը: ՀԶԾ-ի իրագործումը հնարավորություն կտա քայլ առ քայլ մոտենալ հեռվում նշմարվող այն ցանկալի տեսլականին, որպիսին ցանկանում է տեսնել համայնքը նրա յուրաքանչյուր բնակիչ: ՀԶԾ-ում տեղ գտած դրույթները լինելու են այն ծրագրային հիմքը, որի վրա հենվելով կազմվելու է համայնքի յուրաքանչյուր տարվա բյուջեն:

Ծրագիրը հաջողությամբ իրագործելու համար ՏԻՄ-երը պետք է սերտորեն և արդյունավետ համագործակցեն պետական կառույցների, միջազգային դոնոր կազմակերպությունների և այլ շահագրգիռ կողմերի և կառույցների հետ:

ՀԶԾ-ի իրականացման հսկողությունը և ներքին վերահսկողությունը կիրականացնեն համայնքի ղեկավարը և համայնքի ավագանին: ՀԶԾ-ի ներքին վերահսկողության արդյունքները կներկայացվեն համայնքի ավագանուն՝ ի գիտություն:

Յուրաքանչյուր հաջորդ տարի կկատարվի ՀԶԾ-ի իրականացման նախորդ տարվա արդյունքների ուսումնասիրություն, ամփոփում, ձեռքբերումների գնահատում և թերությունների բացահայտում: Նախորդ տարվա արդյունքների հիման վրա համապատասխան ուղղումներ և լրացումներ կկատարվեն մնացյալ տարիների ծրագրերում:

Հիմնվելով ՀԶԾ-ի իրականացման տարեկան հաշվետվության վերաբերյալ համայնքի ավագանու կայացրած որոշման վրա, ՀԶԾ-ի վերանայման անհրաժեշտության դեպքում, համայնքի ղեկավարը ՀԶԾ-ում փոփոխություններ ու լրացումներ կատարելու վերաբերյալ իր և (կամ) համայնքի ավագանու անդամներից ստացված բոլոր առաջարկությունները ներկայացնում է համայնքի ավագանու քննարկմանը և հաստատմանը:

Համայնքի ավագանու անդամի (անդամների) առաջարկած այն փոփոխությունները և (կամ) լրացումները, որոնք ավելացնում են ՀԶԾ-ի իրականացման ծախսերը, համայնքի ավագանու որոշմամբ ընդունվում են միայն համայնքի ղեկավարի եզրակացության առկայությամբ և ավագանու նիստին ներկա անդամների ձայների երկու երրորդով:

ՀԶԾ-ի փոփոխությունները և (կամ) լրացումները, ավագանու հաստատումից հետո, հրապարակվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: